Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Ի պատասխան № UG-20 «ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքի ջրամատակարարման պոմպակայանը սնուցող ենթակայանի վերազինման և համայնքի սեփական կարիքների համար արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղադրում» ապրանքների գնման մրցույթի վերաբերյալ 2020/06/02 ժամը 13:22 և 2020/06/04 ժամը 17:09 էլ-փոստով ստացված հարցումներին ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

Հարց 1՝

«• լոտ №1 «ջրամատակարարման պոմպակայանը սնուցող ենթակայանի 1 հատ տրանսֆորմատոր» - խնդրում ենք տրամադրել անհրաժեշտ տրանսֆորմատորի տեխնիկական տվյալները (ուժային, յուղային, չոր և այլն),

- լոտ №1-ով նախատեսված աշխատանքների ծավալը
- արևային ՖՎ էլեկտրակայանից մինչև ենթակայան կառուցվող օդային գիծը իրականացնող մասնակիցը (առանձին լոտերով մասնակցելու և տարբեր հաղթողների պարագայում որ մասնակիցն է իրականացնելու օդային գծի կառուցումը)
- լոտ №1-ի համար տրամադրվող ֆինանսավորման գումարը:»

Հարց 2՝

«ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքի ջրամատակարարման պոմպակայանը սնուցող ենթակայանի վերազինման համար անհրաժեշտ 250կՎԱ հզորությամբ ԼՏԵ-ի տեխնիկական տվյալները կուղարկեք:»

Պատասխան՝ Հայտնում ենք Ձեզ, որ լոտ №1 ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքի ջրամատակարարման պոմպակայանը սնող ենակայանի վերազինման և առկա տրանսֆորմատորի փոխարինման աշխատանքների ծավալներն ու տեխնիկական պահանջները ներկայացված են «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրված էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններ փաստաթղթում (առդիր 1), այդ թվում 200 մ երկարությամբ օդային գծի կառուցումը: Փոխարինվող ուժային տրանսֆորմատորը պետք է համապատասխանի ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1939-Ն որոշման պահանջներին:

Մրցույթի արդյունքում հաղթող կճանաչվի տեխնիկական առաջադրանքի և որակավորման պահանջներին համապատասխանող նվազագույն գին առաջարկած մասնակիցը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

№ UG-20 «ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքի ջրամատակարարման պոմպակայանը սնուցող ենթակայանի վերազինման և համայնքի սեփական կարիքների համար արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղադրում» ապրանքների գնման մրցույթի կառուցվածքը փոփոխվում է երկու լոտերով մրցույթից մեկ լոտով մրցույթի:

Armeps համակարգով տվյալ փուլում մրցույթի կառուցվածքը հնարավոր չէ փոփոխության ենթարկել, ուստի տվյալ մրցույթը վերահայտարարվել է UG-20-M ծածկագրով:

Հայտատուներին առաջարկվում է հայտերը ներկայացնել նոր № UG-20-M շտկված մրցութային փաստաթղթերով: Մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետը և հայտերի բացման ժամկետը չի փոփոխվել, այն է՝ 2020 թվականի հունիսի 24-ը, ժամը 12:00-ին:

Հարգանքով՝

Արեգ Եղիյան
№ UG-20 մրցույթի քարտուղար
ՀՏԶՀ

13 հունիսի 2020թ.